

ԿՈՒԼԲԵՆԿԻ ՈՐԳԻՆԵՐ ԳՈՒԼԱՔԻԻ ԵՎ ԳԱԼՈՒՍՏԻ 1847 Թ.  
ՍՈՒԼԹԱՆ ԱՔԳ-ՈՒԼ-ՄԵՋԻԳԻՑ ՍՏԱՅԱԾ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ

Օսմանյան պաշտոնական գիվանական վավերագրերի ցարգ կատարված աղբյուրագիտական ուսումնասիրություններն ու գիտական հրատարակումները, առավելապես ընդգրկում են ֆեոդալական իմունիտետի կամ մուաֆուսյան, ներքին վարչատնտեսական և հատկապես հարկային սիստեմին վերաբերող վավերագրերն ու հարկացուցակները<sup>1</sup>: ներքին և արտաքին առևտրին, ապրանքափոխանակությանն ու առևտրական հարկերին ու մաքսային դանձումներին վերաբերող նյութերը մեծ մասամբ վերաբերում են կայսրության եվրոպական մայր ցամաքում գտնվող նահանգներին: Ուշագրավ են հատկապես անվանի թուրքագետ պրոֆ. Լ. Ֆեքեթեյի 1550—1580 թթ. Բուդապեշտի և մերձակա շրջանների մաքսատնային մատյանների գիտական բարձր մակարդակով կատարված հրատարակումները<sup>2</sup>:

XVI—XIX դդ. Օսմանյան սուլթանների և նահանգային փաշաների կողմից հրատարակված հրովարտակաների ու հրամանագրերի մեջ յուրահատուկ տեղ են զբաղում առանձին խոշոր վաճառականների և առևտրական ընկերությունների տրված բերաթներն ու բույուրուլիթիները, որոնք կայսրության ներքին և հատկապես արտաքին առևտրի վերաբերյալ առավել հավաստի փաստական տվյալներ պարունակող վավերագրական սկզբնաղբյուրներ են հանդիսանում:

Մասնակի ծանոթությունը վերջերս կատարված մի քանի հրատարակումների հետ, թույլ է տալիս խոսելու, արտաքին առևտրի բնագավառում և վաճառականության նկատմամբ Օսմանյան պետության ընդգծված ուշադրության և շահախնդրության մասին: Այս առումով հետաքրքիր են հատկապես Մ. Գուրոլուի հրատարակած Ռումինական ժող. հանրապետության ԳԱ գրադարանում և Պետ. Արխիվում պահվող XV—XIX դդ. վավերագրերը: Հատկանշական է, որ Կոստանդնուպոլսի գրավումից ընդամենը երեք տարի անց (1456 թ.) հրատարակված հրովարտակում, սուլթան Մուհամմատ 2-րդը գրում է. «Քանի որ Բողդանելի տիրոջ՝ Պետրի վոյեվոդի հետ հաշտություն եմ կնքել և մեր մեջ եղած թշնամությունը վերացրել եմ և հրամայել եմ, որ նրա երկրում՝ Ակկեր-

<sup>1</sup> O. L. Barkan, XV ve XVI inci asırlarda Osmanlı İmparatorlugunda ziral ekonominin hukuki ve mali esasları, I cild «Kanunlar», İstanbul, 1945. H. Inalcik. Hicri 835 tarihli Sûret-i sancak-i Arvanid, Ankara, 1945, Turk tarih Kurumu yayımlarından XIV seri: Tahrir defterleri n. I. Kaldy-Nagy. Gy. Kanuni Devri Budin Tahrir defteri Ankara, 1971. دفتر مفصل ولایت گورجستان، تور کچه متنی ترجمه تدقیق و تحشیه

2. Գալապոլսի, 1947 թ. Գալապոլսի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Քաներ Մատենագարանի», № 5, Երևան, 1960:

<sup>2</sup> Rechnungsbücher Türkischer Finanzstellen in Buda (ofen) 1550—1580, herausgegeben von L. Fekete und Gy. Kaldy-Nagy, Budapest, 1962.

մանում գտնվող առևտրական նավերով մարդիկ զան և էղիբներում, Բուրսայում և Ստամբուլում ժողովրդի հետ առևտուր անեն ու վաճառականությամբ զբաղվեն, ուստի, երթևեկության ընթացքում իմ սուբաշիներից, սիփահիններից և զուլերից ոչ մեկը նրանց անձին և ապրանքին վնաս չպատճառի, և եթե լսեմ, որ հրամանիս հակառակելով, նեղություն են տվել, թող իմացած լինեն, որ զուլ կուղարկեմ և նրանց մեծագույն աղետի կենթարկեմ»<sup>3</sup>:

Մ. Գուրոզլուի օսմանյան դիվանագրության և հնագրության ժամանակագրական ուսումնասիրությանը նվիրված մեծարժեք աշխատության մեջ կան վաճառականներին շնորհվող արտոնությունների վերաբերյալ նաև այլ հետաքրքիր հրավարտակներ ու հրամանագրեր<sup>4</sup>:

Օսմանյան տերության պետական բյուջեյում կարևոր տեղ էին զբաղում արտահանվող և ներմուծվող ապրանքներից կատարվող մաքսային գանձումները: Ղ. Ինճիճյանի հավաստի տեղեկություններով XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին կայսրության պետական բյուջեն գոյանում էր ա) ոսկու և արծաթի հանքերից, բ) նվաճված ժողովուրդների վրա դրված հարկերից, գ) հողային տիրույթներից (մալիբանե, մուգադա, զիամեթ, թիմար, սեհիմ և այլն) և ներմուծվող ու արտահանվող ապրանքներից գանձվող մաքսերից<sup>5</sup>: Լայնածավալ կայսրության նավահանգստային և սահմանամերձ մաքսատնային լայն ցանցը, ինչպես նաև ներքին կարավանային ուղիների վրա գտնվող ճանապահապաշտայան ծառայության կետերը, որոնք շատ հաճախ, արքունի գանձատուն կատարվող միանվագ մեծագումար մուծումների դիմաց կապուլով տրվում էին առանձին վարձակալների, հսկայական եկամտի աղբյուրներ էին, որոնց տեական գործունեությունը պայմանավորված էր միայն առևտրական կապիտալի անընդհատ և հարաճուն շրջանառությամբ:

Անընդմեջ պատերազմական գոյժողությունների ընթացքում նույնիսկ, ինչպես Արևմուտքում, այնպես նաև Արևելքում, թուրքական օկուպացիոն իշխանությունները նվաճված երկրների ընդհանուր մարդահամարին և հարկատու բնակչության ցուցակագրությանը զուգահեռ, շտապում էին կարգավորել նաև ներքին և արտաքին առևտուրը և ապահովել վաճառականական ապրանքներից կատարվող մաքսային գանձումները: 1729 թ., երբ օսմանյան բանակը ներխուժելով Անդրկովկաս ու Ատրպատական ռազմակալման էր ենթարկել Արևելք-Արևմուտք առևտրական գլխավոր մայրուղու վրա գտնվող վաճառաչահ քաղաքները, Թավրիզի գլխավորական նահանգապետը շանքեր էր ներդնում վերականգնելու Իրանից արտահանվող մետաքսի դեպի Թուրքիա և Եվրոպա առաքումը: Հատուկ շրջաբերական-հրամանով նա տեղեկացնում էր երկրի վաճառականներին, որ նրանց ներկայացուցիչների հետ փոխադարձ պայմանավորվածությամբ մետաքսի բեռներից գանձվող մաքսի նոր սակեր են նշանակվել և սահմանվել է, որ մետաքսի առևտրով երթևեկողները մաքս վճարեն միայն Արդաբիլի և Թավրիզի մաքսատներում<sup>6</sup>:

<sup>3</sup> M. Guboglu, Paleografia și diplomatica Turco-osmana, Editura Academiei Republicii Populare Romine, 1958, doc. 3.

<sup>4</sup> Նույն տեղում, վավ. 15, 28, 89, 103, 115, 186 և այլն:

<sup>5</sup> Ղ. Ինճիճյան, Աշխարհագրություն շորից մասանց աշխարհի, հ. Ա., Վենետիկ, 1804, էջ 45—49:

<sup>6</sup> Հ. Փափագյան, Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը, «Բանբեր Մատենադարանի», № 9, Երևան, 1969:

Ապրանքափոխանակությունը հարևան և հեռավոր, արևելյան և եվրոպական երկրների հետ, իրագործվում էր տերության սահմաններում բնակվող, նվաճված, մեծ մասամբ քրիստոնյա վաճառականության միջոցով, որոնց համար սահմանված էին հատուկ օրենքներ և տրված՝ որոշակի իրավունքներ: Կար առևտրի առանձին միևնույնություն (Քիջարեթ նեղարեթի), որը վերահսկում էր այդ օրենքների կիրառմանը և հսկում, որ վաճառականների առևտրական գործունեությունը ընթանա այլ երկրների հետ կնքված առևտրական պայմանագրերի սահմաններում:

Սակայն պետության բնույթից բխող անհանդուրժողական վերաբերմունքը այլակրոն, հատկապես օտարերկրացի քրիստոնյաների նկատմամբ և դրա հետևանքով ստեղծված անապահով վիճակը դժվարացնում էր երկրի համար կենսական նշանակություն ունեցող ապրանքափոխանակությունը եվրոպական երկրների հետ: Խոսելով եվրոպական երկրների, Քուրքիայում ձեռք բերած «կապիտուլացիոն» իրավունքների մասին, 1854 թ. Կ. Մարքսը գրում էր. «Քանի որ Ղուրանը յուրաքանչյուր օտարերկրացու թշնամի է հայտարարում ոչ ոք չի համարձակվի գտնվել մուսուլմանական երկրում, առանց նախագուշական միջոցներ ձեռք առնելու: Այդ պատճառով, առաջին եվրոպացի վաճառականները, որոնք համարձակություն են ունեցել առևտրական հարաբերությունների մեջ մտնելու այդպիսի մի ժողովրդի հետ, փորձել են նախ և առաջ անձամբ իրենց ապահովել բացառիկ պայմաններով և առանձնաշնորհումներով, որոնք, սակայն, հետագայում տարածվել են նրանց ողջ ազգի վրա: Այսպիսին է կապիտուլացիաների ծագումը»<sup>7</sup>:

Առաջին միջպետական համաձայնագիրը, որտեղ դիվանագիտորեն ձևակերպված են այլակրոն օտարերկրացիների վաճառականությանը տրվող արտերկրային (էքստերիտորիալ) առանձնաշնորհումները, դա 1535 թ. սուլթան Սուլեյման Կանունիի և Ֆրանսիայի կայսր Ֆրանսուա I-ի միջև կնքված պայմանագիրն է, որի օրինակով էլ հետագայում հար և նման պայմանագրեր կնքվեցին եվրոպական մյուս տերությունների հետ<sup>8</sup>:

Եվրոպացի վաճառականության արտոնյալ վիճակը զգալի չափով դժվարացնում էր տեղական, հատկապես հայ վաճառականության գործը: Ինքնին հասկանալի է, որ առևտրում անխուսափելի մրցակցության մեջ, այս պարագաներում նրանք առավել անբարենպաստ պայմաններում էին գտնվում և պարզ է, որ պիտի ուղիներ որոնեին դուրս գալու անիրավահավասար վիճակից և ձեռք բերելու որոշ իրավունքներ, մրցակցությանը դիմանալու և արդյունավետ առևտրական գործունեություն ծավալելու համար:

Օսմանյան կայսրության արտաքին առևտրում հայ վաճառականության գրաված տեղի և իրավական վիճակի մասին ուշադրավ մանրամասներ են պարունակում նշանավոր Կյուլպենկյան առևտրական տան նախնիների 1847 թ. սուլթան Արդ-ուլ-Մեջիդից ստացած երկու արտոնագիր-հրովարտակաները: Այդ հրովարտականների (բերաթ, ֆերման) վավերական պատճենները պահպանվում են Կյուլպենկյան հաստատության կիսարոնի կենտրոնում, որոնց լուսանկարները հրապարակման իրավունքով տրամադրել է մեզ հաստատության տնօրեն Ռ. Կյուլպենկյանը<sup>9</sup>:

<sup>7</sup> К. Маркс и Ф. Энгельс. Соч., т. 10, М., 1958, стр. 168.

<sup>8</sup> История дипломатии, т. 1. М. 1959, стр. 258.

<sup>9</sup> Ծավոք, այդ լուսանկարները հաջող շնու Ուտի, կից հրապարակվող հրովարտական

Պատճենները հանված են Կ. Պոլսի Մահմուդ-փաշա թաղամասի Շարի ատյանում (մահքամե), պահպանելով բնագրի ձևն ու շափը, ոսկեզօծված և դարդանկարված են բնագրերին համանման և հաստատված՝ «Իսկականին համապատասխան է» մակագրությամբ և գրասենյակի պետ, գործավար Սելիդ Իսմայիլի կնիքով: Ընդօրինակությունը կատարված է, նման բերաթներին բնորոշ, գեղեցիկ «ոիկ'ա» գրությամբ: Վավերագրերի ընդհանուր վիճակը գոհացուցիչ է, վնասված են միայն առաջին հրովարտակի 40 և 41-րդ տողերը:

Բերաթները թեև տրված են Կեսարիայում հիմնված Կյուլպենկյան առևտրական տան արտոնատեր Կուլպենկի որդի Գուլաբին և որպես լիազոր (վեքիլ) հանդես եկող եղբորը՝ Գալուստին, սակայն դրանց մեջ որոշակիորեն ուրվագծված են ժամանյան Թուրքիայում բնավկվող հայ վաճառականության իրավունքները:

Նախապես նշելով սուլթանի հատուկ ուշադրությունը առևտրի ու վաճառականական դասի նկատմամբ, բերաթում ասված է, որ «անհրաժեշտ է բարձր տերություն զիմմի ռայաթների առևտրական գործունեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել և այսպիսով ապահովել դրանից գոյացող բազմապիսի շահն ու օգուտը»:

Հրովարտակներից պարզ երևում է, որ եվրոպական երկրների հետ առևտուր անող զիմմի վաճառականության իրավունքները սահմանելիս, նկատի են առնված այդ երկրների քաղաքացիներ հանդիսացող վաճառականներին Թուրքիայի սահմաններում շնորհված արտոնությունները, «Որքանով որ վերոգրյալ մարդկանց (զիմմի վաճառականներ) առևտուրը բացառապես եվրոպական երկրների հետ է, ուստի օտար (մուսթեմին) թարգմանիչներին և գործակատարներին շնորհվող արտոնությունները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, նրանց և երկու գործակատարների նկատմամբ ևս, առանց խտրության գործադրվում է»:

Դժվար է ասել, թե այս արտոնությունները ո՞ր ժամանակից և ո՞ր սուլթանի օրոք են շնորհվել եվրոպական երկրների հետ առևտուր անող հայ վաճառականներին: Գիտենք միայն, որ յուրաքանչյուր նոր սուլթանի օրոք վերանորոգվում էին նախորդի կողմից տրված բերաթները: Ինչպես որ այս բերաթները ևս տրված են հիշք. 1249 (1833) թ., նախորդ սուլթան Մահմուդ II-ի բերաթի հիման վրա, և առևտրի մինիստրության կողմից ստուգվելուց (յուրլամա) հետո, նախորդ բերաթը վերցվել ու անվավեր (բատալ) է դարձվել: Ուրեմն միշտ ուժի մեջ է եղել գահակալ սուլթանի բերաթը, իսկ նախորդինը որպես հիմք վերցվել և պահպանվել է արքունի դիվանում: Հետևաբար պարզ չէ նույնիսկ, թե Կյուլպենկյաններին տրվող նմանատիպ առաջին բերաթը երբ և որ սուլթանի կողմից է հրապարակված:

Եվրոպական երկրների քաղաքացիները բերաթներում անվանվում են Մուսթեմին բեռլումանլար, որ բառացի նշանկում է «աման» կամ ապահովություն վայելող թարգմանիչներ: Ծոսքը վերաբերում է արքունի ծառայության մեջ գտնվող եվրոպացի թարգմանիչներին, որոնք օժտված էին դիվանադիտական մարմիններին հատուկ արտերկրային իրավունքներով: «Մուսթեմին թեռլումանլար» տերմինի կիրառումը առևտրականներին տրվող արտոնագրերում, գալիս է հաստատելու, որ կապիտուլացիոն արտոնությունն-

հայերեն թարգմանությանը առընթեր տալիս ենք միայն թուրքերեն վերձանված բնագիրն, առանց լուսանկարների:

րը, ըստ էության նույն այդ իրավունքներն էին բովանդակում: Հետևաբար հենց այդ իրավունքներից էր, որ պիտի օգտվեին Առևտրի մինիստրությունում գրանցված հայ վաճառականները, որոնք անվանված են «ղեֆթերլու թաշիր»:

Այսպես, օրինակ, ազատ երթևեկության մասին, բերաթում ասված է «օտարներին և նրանց վերաբերող մարդկանց տրվող հրամանագրերի նման, սրանց ևս, նույնօրինակ առևտրական պայմանների նշումով, համբողջության հրամանագրեր տրվեն» և ապա մանրամասնելով նշված է. «Ինչպես որ օտար թարգմանիչների և նրանց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ միջամտություն և ռանձգություն չի թույլատրվում, այնպես նաև սրանց և իրենց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ որևէ միջամտություն և ռանձգություն չպետք է լինի»: Այնուհետև յուրաքանչյուր արտոնության մասին նշելիս միշտ վկայակոչվում է մուսթե՛միներին տրված արտոնությունները:

Բերաթներում ուշագրավ մանրամասնություններ կան ներմուծվող և արտահանվող ապրանքներից դանձվող մաքսերի տարրեր սակերի և իրացման կարգի, գլմմիներից դանձվող գլխահարկի կամ ջիզյաչի հատուցման ձևերի, առևտրական բազմաբնույթ վեճերի բնության համար սահմանված օրենքների, վախճանված վաճառականների ունեցվածքի անօրինման կամ ժառանգության, ինչպես նաև վաճառականական դասի համբարական կազմակերպությունների ու ավազների (կոշարեկի) բնորության կարգի վերաբերյալ: Խստագույն հրամանով, բոլոր հրահանգների ճշգրիտ կիրառությանը հետևելու պարտավորությունը գրվում է պետական բարձրատիճան պաշտոնություն՝ վալիների, հաքիմների, դարիթների և այլոց վրա, զգուշացնելով, որ բերաթ ունեցող վաճառականների նկատմամբ «նոր հաստատված օրենքներին հակասող ռանձգություններ թույլ չտան, նեղություն չպատճառեն, այլ արքայական բարեխնամ իշխանության պահանջով, բոլոր դեպքերում հավանավորեն և պաշտպանություն ցույց տան»: Միաժամանակ շեշտված է նաև, որ «նշված առանձնաշնորհումները միայն անձամբ վերողրյալ վաճառականներին և նրանցից յուրաքանչյուրի երկու գործակատարներին է վերաբերում: Իսկ նրանց զավակների, ազգականների և տեղում մեծաշուք հրամանագիր չունեցող գործակատարների նկատմամբ, պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են մյուս ռայաթների նկատմամբ»:

Ստորև հրատարակվող հրովարտակներից առաջինը սուլթան Աբդուլ-Մեջիդի բերաթն է տրված Կուլբենկի որդի Գուլարիին, իսկ երկրորդը նույն բերաթի հիման վրա, Կեսարիո Շարի նաիրին ուղղված ֆիրմանն է (հրաման), որով հայտնում է ի գիտություն, որ Կուլբենկի որդի Գալուսար ևս, սահմանված կարգով ջիզյա վճարելուց հետո, որպես Գուլարիի երկու գործակատարներից մեկը, օժտված է նույնպիսի արտոնություններով:

### I

Բարձրագույն իսկականին համապատասխան է:

Ընդօրինակվեց բարձրագահ մալրաբաղարի Մահմուդ-փաշայի առյանի (մահչամա), լիազոր-փոխարինող, նվաստագույն ծառա Սելիդ-Իսմայիլ Տահիմի կողմից:

Տերն է անօրինում Սելիդ-Իսմայիլ ֆահիմի գործերը:

## ԲԱՐՉՐԱՇՈՒՔ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

Օսմանյան բարերախո գահի արքայական գերերշանիկ գահակալությանը արժանանալուց հետո, մեր մեծաշուք տերության ընթացիկ օրենքներին համապատասխան, ձեռնարկեցինք հրովարտականների ու հրամանագրերի նորոգմանը և տիրոջ օգնությամբ ձեռնամուխ եղանք երկրի բարեկարգմանն ու առևտրի ծավալմանը, ուշադրության առնելով հատկապես վաճառականների և ռայաթների վիճակի կարգավորումը:

Այս տեսակետից հարկ համարվեց, գործի ղեկավարման կատարելությանն ու արդյունավետությանը նախանձախնդիր և պետությունների օրենքների և բոլոր ազգերի միջև ընդունված կարգի համաձայն, նույն օրենքներին ենթարկվելով, թե ցամաքային և թե ծովային ուղիներով Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտուրով զբաղվող և վաճառականական դասի շարքերում լինելու և ընկերակցելու ցանկություն ունեցող մեր բարձր տերության զիմմի ռայաթների առևտրական գործունեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել և այդպիսով ապահովել դրանից գոյացող բազմապիսի շահն ու օգուտը:

Արքայական պետության համոզմամբ, այս գործի անհրաժեշտ նախապայմաններից է հիշյալ վաճառականների վերաբերյալ, արքունական հրամանագրով հաստատված կարգի համաձայն, իրենց կողմից ընտրված վստահելի մարդկանցից բարձրագույն հրամանով, երկու հոգու որպես լիազոր նշանակումը:

Այս լիազորները ամեն տարի կարող են փոխվել և նրանց տեղը, կրկին բոլորի ներկայությամբ ու ընտրությամբ, ուրիշներ կարող են նշանակվել:

Որքանով որ վերոգրյալ մարդկանց առևտուրը բացառապես եվրոպական երկրների հետ է, ուստի օտար (մուսթե՛մին) թարգմանիչներին և գործակատարներին շնորհվող արտոնությունները, ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, նրանց և երկու գործակատարների նկատմամբ ևս, առանց խտրության գործադրվում է:

Եվ քանի որ վերոհիշյալ վաճառականներին և սրանց երկուական գործակատարներին առևտրի վերը նշված նախապայմանների և այլ իրավունքների մասին այլևայլ բարձր հրովարտական և հրամանագրեր են տրվում, նույն հիմունքներով մեր բարձր տերության ռայաթներից, եվրոպական երկրների հետ առևտրով զբաղվող Կեսարիո բնակիչ և արքայական բարձր հրովարտակ ստացող Կուլբենկի որդի Գուլարի կողմով վաճառականին 1249 թվականի ռաբի II ամին (1833 թ. սեպտ. 11—14) տրված բարձր հրովարտակը նորոգված լինելու պատճառով և Առևտրի մինիստրության կողմից կրկին ստուգվուց հետո վերոհիշյալ հին հրովարտակը վերցված և անվավեր դարձված լինելու պատճառով, սույն արքայական հրովարտակը շնորհեցի:

Միաժամանակ հրամանագրեցի, որ հիշյալ Կուլբենկի որդի Գուլարին այսուհետ ևս ճանաչվի որպես զրանցված (ղեֆթերու) վաճառական և եթե ընդունված կարգով նշված եվրոպական վաճառականներից մեկը կամ նրանց գործակատարն ու պաշտոնյան պետք ունենան առևտրական նպատակներով որևէ տեղ գնալ, վերոգրյալ լիազորներից կնքյալ խնդրագրեր ներկայացնելու դեպքում, օտարներին և նրանց վերաբերող մարդկանց տրվող հրամանագրերի նման, սրանց ևս, նույնօրինակ առևտրական պայմանների նշումով, ճամ-

բորոգության հրամանագրեր տրվեն, և ինչպես որ օտար թարգմանիչների և նրանց զավակների ու կանանց սնունդի և հագուստի (ուտելիք և հագնելիք) նկատմամբ միջամտություն և ոտնձգություն չի թույլատրվում, այնպես նաև սրանց և իրենց զավակների ու կանանց սնունդի ու հագուստի նկատմամբ որևէ միջամտություն չպետք է լինի:

Հրովարտակ ունեցող վաճառականների իրենց եղած վայրում, այլևայլ հրովարտականերով նրանց հատկացված երկուական գործակատարները ևս թող նույն առանձնաշնորհումներին արժանի համարվեն: Այդ երկու գործակատարներից մեկը անհրաժեշտության դեպքում իրավունք ունի Իզմիրում, կամ առևտրական կենտրոն հանդիսացող այլ վայրում հաստատվելու:

Հրովարտակ ստացողներից որևէ մեկը եթե ստորագրված և վճարման ենթակա մուրհակի համաձայն կամ լիազորների ու համքարության (էսնաֆ) անդամների բանավոր վկայությամբ հաստատված պահանջ ունենա, ձեռքում եղած մուրհակը դատավորին (հաբիմին) ցույց տալուց և ապացուցելուց հետո, պահանջված գումարը ենթակա է գանձման և հարչուրին երկու տոկոսից ավելի տուրք (ոեսմ) չպետք է պահանջվի:

Հիշյալ վաճառականներից մեկը, լինի դա մուսուլմաններից, թե ուլաթներից, իր իրավունքները պաշտպանելու համար դատարան կամ բարձրագույն դուռը ուղարկելու նպատակով...<sup>\*</sup>

Հաստատված վաճառականներն ու նրանց գործակալները առևտրի մինիստրության կողմից վերակացունեն...<sup>\*\*</sup> կողմից վերակացու շնշանակվի: Իսկ եթե հարկ լինի նրանց կալանքի տակ վերցնել, հիշյալ մինիստրության հանձնարարությամբ միայն կարելի է այդ անել:

Որքանով որ սրանք մեծ մասամբ եվրոպական ապրանքների առևտրով են զբաղվում, թե՛ օտարների, թե՛ մահմեդականների կամ այլ ազգությունների ներկայացուցիչների հետ վեճ ու տարաձայնություն առաջանալու դեպքում, հիշյալ մինիստրության համաձայնությամբ, վաճառականների և նրանց կողմից ընտրված, ճանաչված, վստահելի ու արժանահավատ մարդկանց ներկաչացմամբ, վաճառականաց օրենքների համաձայն, առևտրական սանը գործին վերահասու լինեն ու վեճը հարթեն: Իսկ եթե հարկ լինի դիմել սրբազան Շարի-ին, այլ վայրում հարցը չքննեն, միայն շեյխ-ուլ-իսլամի ներկայությամբ, Շարի օրենքների համաձայն գործին նայեն և հարցը լուծեն:

Մրանից բացի, այդ վաճառականներին վերաբերող այլ կարգի գործերը ևս առևտրական փաստաթղթերում, հատկապես հաշվապահական մատյաններում թող մուտք արվի, և քանի որ դրանք հիշյալ մինիստրությանը վերաբերող գործեր են, որպիսությունը վերոգրյալ ձևով և հիշյալ վաճառականների ընդհանուր վիճակը հաշվի առնելով, նույն մինիստրության կողմից, ըստ ժամանակի պահանջների վերանայվի, և այդ ձևով միայն պատահող գործերը, մինիստրության վերահասությամբ նայվի և կարգադրվի:

Ինչպես որ պայմանագրում նշված կարգով 4000 ակչիից ավելի գումարների շուրջ եղած վեճերը կարգադրված է լսել միայն մեք երջանիկ սեմում, այնպես նաև այս վաճառականների օտարների հետ ունեցած վեճերը նույն ձևով թող ներկայացվեն երջանիկ սեմին: Ի նկատի պետք է ունենալ, որ մեք

\* Երեք տող չնշված է:

\*\* Երեք բառ չնշված է:

բարձր տերության բերաթավոր ուսյաթների և այլ պետության վաճառականների միջև վեճեր ծագելու դեպքում, պետք է հաշվի առնել երկու պետությունների միջև կնքված պայմանագրերում նշված պայմանները և դրանց հակասող ոչինչ թույլ չտալ:

Այս դասի մարդկանց, նման իրավունքներ տալու նպատակն է դուրսություններ ստեղծել: Ուստի այդ վաճառականներն՝ միջոցով օտար երկրներից մեր ապահով երկրները բերվող ապրանքներից և իրերից, Անգլիայի, Ֆրանսիայի և որոշ այլ բարեկամ պետությունների հետ վերջերս կնքված առևտրական պայմանագրերի և սահմանված սակագների համաձայն, ներմուծվող ապրանքներից, որպես մուտքի (ամադիյե) հարկ հարյուրին 3%, իսկ ելքի (ռաֆթիյա) թամդայի և այլ տուրքերի դիմաց, հավելյալ, հարյուրին 2% մաքսատուրք պետք է վճարել: Իսկ մեր արքայական ապահով երկրներում արտադրվող ապրանքները, իրերն ու մթերքները արտահանելիս, տեղում վաճառողի տասնորդից և պահանջվող թամդայի տուրքից բացի, ըստ վերոհիշյալ սակագնի, նավահանգստում ապրանքն իջեցնելիս, հարյուրին 8% մուտքի տուրք, իսկ շրջանները տանելու համար հարյուրին 3% ելքի տուրք թող վերցնեն: Մեր արքայական ապահով երկրներում արտադրվող ապրանքների, երկրի ներսում կատարվող առևտրի ժամանակ նմանապես, բոլոր, տեսակի ապրանքներից, իրերից և մթերքներից գանձվող տուրքերը ևս սահմանված կարգով առանց հարկադրանքի և խախտումների պետք է հատուցվի:

Երբ հիշյալ վաճառականները, նշված կարգով, պահանջվող մաքսատուրքը վճարած և վճարումը հաստատող անցաթուղթ ձեռք բերած կլինեն, նրանցից կրկին հավելյալ մաքս չպահանջեն և գանձումներ չկատարեն, և եթե մաքսատան լիազորները հավելյալ կամ կրկնակի մաքսի անվան տակ դրամ գանձած լինեն, անմիջապես ետ վերադարձնեն:

Վալիները, հաքիմները և այլ պաշտոնյաներն ու զարիթները հիշյալ վաճառականների նկատմամբ սրբազան Շարիին հակառակ և նոր հաստատված օրենքներին հակասող ոտնձգություններ թույլ չտան և նրանց նեղություն չպատճառեն, այլ արքայական բարեխնամ իշխանության պահանջով բոլոր դեպքերում հովանավորեն և պաշտպանություն ցույց տան:

Բերաթ ունեցող վաճառականների և նրանց գործակատարների նահանգային գործերին և ավագության (կոշաբաշիլք) հարցերին ոչ մի դեպքում չմիջամտեն, նախապես եղած արտոնություններով և կարգով թող լինի: Հակառակը չի թույլատրվում: Միայն եթե որոշ երկրներում բերաթավորներից գատ, լավատեղյակ անձանց մեջ ավագության պաշտոնին հարմար մարդ չլինի և կարիք լինի այդ վիլայեթի ուսյաթներին ղեկավարելու և գործերին հասնելու համար, բերաթավոր վաճառականներից ավագ նշանակել, և եթե այդ երկրում գանվող բոլոր ուսյաթները ցանկանան, այդպիսի վայրում կարելի է միայն նրանց թույլատրել ավագության պաշտոնը վարել:

Սակայն ավագության պաշտոնը վարող անձնավորությունը, այլևայլ առանձնահատկություններից զերծ լինելու պատճառով, ուսյաթների նկատմամբ չիզայի օրենսդրությանը հակառակ, որևէ բնություն կամ անվայել արարք թույլ չտա, իսկ եթե թույլ տա, նրա նկատմամբ պետք է գործադրել պատժական օրենսդրությամբ նախատեսված պատիժները:

Վերոհիշյալ վաճառականներից եթե մահացողներ լինեն, նրանց խառնութները, գրասենյակները և այլ ստացվածքները Շարից և հիշյալ մինիս-

տրրությունից բացի ոչ ոք իրավունք չունի կնքել: Նրանց թողած անշարժ կաշքն ու կալվածները և այլ մեծ կամ փոքր իրերն ու կանխիկ գրամբ, եթե ժառանգներ կան, պետության (միրի) կողմից միջամտության, կնքման և գրավման ենթակա չեն: Եթե տղա կամ աղջիկ անշափահաս ժառանգներ կան, օրենքով հաշվառման ենթարկվածներից հավելյալ տուրք պահանջելով նեղություն չպատճառեն, այլ ըստ սրբազան Շարի օրենքների, հիշյալ մինխտրության իմացությամբ, բաժանեն ժառանգների միջև: Իսկ անշափահաս կամ բացակա որդիներ և դուստրեր չլինելու դեպքում, բաժանման շենթարկվող ժառանգությունը ստիպմամբ կամ խնդրանքով գրանցման շենթարկեն:

Ջիղջայի առավելագույն շափր 12 դուրուշ է, որ 8 դուրուշ միրի եկամտախ հավելյալ գումարով դառնում է 20 դուրուշ: Բերաթ ունենալու մասին փաստաթուղթ ներկայացնելուց հետո 1232 (1817), 1240 (1824—1825) և 1243 (1827—1828) թվականների հավելումներից բացի, այդ 20 դուրուշ ջիղջան 1250 (1834—1835) թ. մուհառամ ամսից սկսած, կատարված ընդհանուր նոր հավելումներով մեկտեղ, մեր արքայական բարձր կամքով հաստատված օրենքներին համապատասխան, ամեն տարվա մուհառամ ամսի սկզբին իրենց տեղում հատուցեն:

Իսկ մեր բարձր հրամանագրերով գործակատար եղողները, կանոնադրության պայմաններին համապատասխան, վճարելիք միջին շափի շորս դուրուշ ջիղջան [12]32(1817), [12]40 (1824—1825) և [12]43 (1827—1828) թվականների հավելյալ գումարից բացի, նորերս կատարված հավելումի հետ միասին, թող ամեն տարի որոշված ժամկետին հատուցեն:

Նշված առանձնաշնորհումները միայն անձամբ վերողրյալ վաճառականներին և նրանցից յուրաքանչյուրի երկու գործակատարներին է վերաբերում, իսկ նրանց դավալանների, ազգականների և տեղում մեծաշուք հրամանագիր չունեցող գործակատարների նկատմամբ, պետք է վարվել այնպես, ինչպես վարվում են մեր մյուս ուսյաթների նկատմամբ:

Բերաթներ և հրամանագրեր ձեռք բերած վաճառականներն իրենց հերթին պետք է մեր բարձր պետության ուսյաթը լինելու արժեքը հասկանան և իրենց պատիվն ու հարգանքը բարձր պահեն և ուսյաթների սովորույթին հակասող արարմունք թույլ չտան և ջանադիր լինեն իրենց շնորհված այս օժանդակությունն ու ողորմածությունը, հանապաղ փառարանությամբ և մեր թագավորական փառապանծ տերությանը երկար կյանք ու արեշատություն մաղթելով հատուցելու:

Թող այսպես իմանան և վստահեն սրբազան գրությանը:

Գրվեց 1263 թվականի ջումադի II ամսի սկզբներին (1847 թ. մայիս 17—22), ապահով Կոստանդնուպոլսում:

## II

Բարձրագույն իսկականին համապատասխան է:

Ընդօրինակվեց բարձրագահ մայրաքաղաքի Մահմուդ-փաշայի ատյանի (մահրամա) լիազոր փոխարինող, նվաստագույն ծառա Սեյիդ-Իսմայիլ Ֆահիմի կողմից:

Տերն է տնօրինում Սեյիդ-Իսմայիլ Ֆահիմի գործերը

## ԲԱՐՉՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԻ ՊԱՏՃԵՆԸ

Կեսարիո Շարի վեհագույն տեղակալ (նախ) մեզիանա ...ին,--թող ա-  
վելանա նրա իմացությունը:

Արքայական բարձր հրովարտական ստանալիս թող հայտնի լինի Ձեզ, որ  
Օսմանյան բարեբախտ գահի արքայական գերերջանիկ գահակալությունը ար-  
ժանանալուց հետո, մեր մեծաշուք տերության բնթացիկ օրենքներին համա-  
պատասխան, ձեռնարկեցինք հրովարտականի և հրամանագրերի նորոգմանը,  
նպատակ ունենալով Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտրով  
զբաղվող և վաճառականական դասի շարքերում լինելու և բնկերակցելու ցան-  
կություն ունեցող, մեր բարձր տերության սուլթանների առևտրական գործու-  
նեությունը որոշակի կարգ ու կանոնի ենթարկել:

Ըստ այդմ կարգադրվեց, որպեսզի օտար (մուսթեմին) թարգմանիչների  
և նրանց գործակատարների նկատմամբ գործադրվող առանձնաշնորհումները,  
ապահովությունը, օժանդակությունն ու հովանավորությունը, առանց խտրու-  
թյան, ամբողջությամբ, սրանց նկատմամբ ևս կիրառվի: Դրա համար էլ Եվ-  
րոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ առևտրով զբաղվող վաճառ-  
ականներին և նրանց գործակատարներին առանձին-առանձին հրովարտականք:  
ու հրամանագրեր շնորհվեցին:

Այս ուրույն կարգից ելնելով, դրանցված (դեֆթերլու) վաճառականներից,  
բնդարձակ և մանրամասն վաճառականական հրովարտակի արժանացած,  
Կեսարիո բնակիչ, Կուլբենկի որդի Գուլարի անունով վաճառականի երկու  
գործակատարներից, Կուլբենկի որդի Գալուստ անունով գործակատարի հո-  
վանավորության և պաշտպանության մասին հրովարտակում նշված պայման-  
ներով, նախապես ստացած բարձր հրամանագիրը նորոգելու առնչությամբ,  
առևտրի մինիստրության կողմից ստուգում է կատարված և նշված է Արքունի  
դիվանում պահվող հրովարտակի վերաբերյալ: Ուստի ելնելով այն բանից,  
որ վերոգրյալ վաճառականը Եվրոպայի, Պարսկաստանի և Հնդկաստանի հետ  
առևտուր անող վաճառական է, նրան ևս սույն բարեբախտ տարվա շումարի II  
ամսից, մեր հրովարտակը տրվելու մասին դրվել և նշվել է և վերոգրյալ գոր-  
ծակատարից վերցվել է այդ հին հրամանը, անվավեր դարձվել և ապա սույն  
սրբազան հրամանն է նրան շնորհվել:

Այժմ արգեն վերոգրյալ վաճառականի երկու գործակատարներից, վերո-  
գրյալ Կուլբենկի որդի Գալուստը, առաջվա պես կարող է նրա մոտ ծառայել  
և օրինական պայմաններով, հրամանագիր ունեցող գործակատարներից պա-  
հանջվող միջին շափի ջիզան, բնդհանուր կարգադրությամբ կատարված նոր  
հավելումով և վերջերս հաստատված հիմունքներով, 1250 թ. մուհառամ ամ-  
սից սկսած (1834 թ. մայիսի 10-հունիս 9), ամեն տարի, նշված ժամկետին  
որոշված վայրում հատուցել, որից հետո այլևս նրանից վերստին ջիզյա չպետք  
է պահանջվի և այլ ուսնձգություններ չպիտի թույլատրվի կամ նեղություն  
տրվի: Այլ հարկ եղած դեպքում պետք է նրան հովանավորել ու պաշտպանու-  
թյուն ցույց տալ:

Դու որ տեղի տեղակալն ևս (նախ), տեղեկանալով այս մասին, վերը  
բացատրված ձևով պետք է վարվես և խուսափես բնթացիկ օրենքներին և պայ-

մաններին ու մեր այս խիստ կարգադրութեանը հակասող ընթացքից: Այսպէս իմացած եղիր և վստահիր սուչն սրբազան գրութեանը:

Գրվեց 1263 թ. ջումադի II ամսի սկզբներին (1847 թ. մայիս 17—22) ապահով Կոստանդնուպոլսում:

عن عبد العالی

بسم الله الرحمن الرحيم، الخلاق العليم محكم محمود ياتنا

المولى الخلاق سيد اسماعيل سيد

- سه -

ر - مفصل امور سيد اسماعيل سيد

براب عالمشار نشری

بسم الله الرحمن الرحيم، الخلاق العليم محكم محمود ياتنا  
سید فاعد، سرعیت سلطنت سیدیم، اورره عمومأ تعدید سرواب، احکام اولمئلده  
اولسدیو، ساوری توفیق ناری ایله اعمار، صلیک، بسیمیح، ر - مطلقاً نظام  
حال، نخار، و رعیت حصول لریمه دفع و نظارت سون سو یابد، ایضا اندیب اسباب  
روسانیک استعمار، استکماله منوقف و متوقفا، اصول، و قواعد دون و رسوم و آئین  
مطلق بالانتقاد سو نظام، اوزره متداول و مصحوح اولنه رو سو جهتله سرأ ر بحرأ  
اوروپا، ر عم و هندستان، تجارتیکه مألوف اولان و سلک نخاره اشراك حواهنر و  
آورسد، سولمار دولت علیه اهل ذمت رعایای تجارتی لریمک تحت راطه و نظامه  
ادخال اولمش، انواع فوائد و منافعی مستلزم اولنه حی مفدا ماندن سلطنت سیدیه  
نصو، و حسن مطالعه ایله نخار مرفوعه حقلرنده، سا اراده سینه تأسیس اولشان  
نظام اقتصادیمحه کندولریمک معنر و منتخبلرندن سافرمان عالی ایکی نشر وکیل  
نص و تعیین للندری و سهرسه اشمو وکیللر تبدیل اولنوب برلریمه یفته حمله  
سک معرفت و انتخابیکه اخرلری تعیین اولنوب، طائفه مرفوعه سک تجارتی  
اوروپا دیار لریمه منحصر اولدیعدن مستأمر نرحمار و خدمتکار لریمک نایبل  
اولدفلری اسیار، ر اهمیت و مساعد، و رعایه سولرک، ایکینر نشر خدمتکار  
لریمک حقلرنده یخی بلا استثنا. احرا قلممو اورره، ذکر اولنار ناخرلریم،  
و ایکینر نشر خدمتکار لریمه ذکر ی آئی نخار - سر ایطو، ر سروص، حائره، درج و  
سیانیه یفته یفته سرواب و اوامر علیه و برلمکد. ایدوکنه سع: اولوچهنه  
رعایای دولت علیه مدن اولنوب اوروپا تجارتیکه مألوف سولمار قیصریمده



اولنه و بوندن ما عدا سائر گونه امور و خصوصتري و مواد تجارت دانسته حساب  
و کتابتري و لا سيما الحال اولهري كمبائتي نهي نظارت منارالبهايك منفعرات  
مأمورينندن اولهق ملاحظه سبله سوجه محرو تجار مرفومهك كاته احواله نظارت  
منارالبها حاسندن سوجه وقت نظارت و اولوجهله مصالح واقعهلرن معرفت نظارت  
منارالبها ايله نسوبه و رويت قلنه و مستامانك طئرنه دردمينك آنچه دن زياده  
اولان دعواتلري در سعادتنه حواله اولهق عهدنامه لري شرطنده اولديغي منسللو  
بوتلك نهي مستامان آبد اولان سراعلري كذلك در سعادتنه حواله قلنه والحاصل  
سرانلو رعناي دولت عليهم تجارينك قضي دولت ناخر لريله سراعلري طهور ابدن  
سه دولتين بيلنده سعادت اولان عهدنامه شرطي احرا اولوب سر وقتده خلافي  
تجويز اولميه و طائفه مرفوماك سر وجهله تحت رانظمه الحال اولمهلرندن  
مقصود احد تجارتلريعه و سبله سرحولت اولهق فرصه سنه نهي اولديغندن تجار  
مرفومهك ديوار احسنه دن ممالك محروسه مگنوردكلرن امنعه و اشيا دن ايكلنره  
و سراسه دولتلري و سائر بعضي دول منجايله موحراً عقد اولمان تجارت معا  
هدمي و تنظيم قلنان تعريفسي وجهله حيس ورودنده آمديه اولمارق بوردده اوج  
و عيار نعماء رتبه و رسومات سائره بيرينه منضم اولان بوزده ايكي رسم گمرک  
و ممالك محروسه شاهانم محصولندن نقل ايده حكملري امنعه و اشيا و ارزاقدن  
محلنده نابعي طرفندن ويريله حك مشريله ايجاب ابدن رسم سعادت شقه سرحولت  
سرفه مذكوره ايكله لرد. حيس سربيلنده طقور آمديه و طئره گوقصور دكاسرنك  
بوزده اوج رتبه رسمي آله و ممالك محروسه شاهانم محصولي اولوب بنده ممالك  
باستانهانم دروسنده بيع و فروخت اولمان كاته امنعه و اشيا و ارزاقدن نهي  
رسومات منصفه سي اصول مقرر و وجهله بلا حور و ارا تانبه و ايضا قلنه و  
تجار مرفومه سر وجهله ايجاب ابدن رسم گمرگلريني ادا ابدوب بدينه معمول به  
ادا نذكره سي آلدندن گمره مكرر زياده گمرک طلب و اخذ اولميه و اگر گمرک امنه  
سي طرفندن زياده و مكرر گمرک ناميله آنچه لري آلتور ايسه درحال رد ايتدرينه  
و تجار مرفوميه ولاه و حكام و سائر مأمورين و ضابطان طرفلرندن خلاف شرع شريف  
و معاير قوانين حديده مؤسسه نعدی و رنجيده و فوجي تجويز اولميه مطلوب  
هماچون معدلتفقرون ملوكانه وجهله هر حالده حمايت و صيانق لرينه وقت اولنه  
و اصحاب سروات اولان تجار و خدمتكارلري امور ولايت و فوجه با شيلق منسللو

خصوصاته وحباً من الوجوه مداخلة ايلميه لير و بوجوه افدم اسباب امتياز و نظام  
 اولمغه سروفنده، خلاصی تحوير اولميه شو قدر كه اگر بعضی مملكتده سراتلو  
 اولاندى ماندا ارباب بغيردن فوجه مانيله ثابان كمره بولمسونك رعایای ولايتك  
 حسن اداره و رؤيت امورات بچون سروات اصحاسی اولان نچاردن سريتك فوجه مانی  
 اولمسی ضرورنی ابحاب ايدركن اول مملكتده اولان رعایانك عموماً اسندعالمی  
 وقوعبولورابه فقط ار مقوله محلده سونلرك فوجه مانيله رؤيت ايلمه حائز  
 اوله حق شخصى اشو امتيازاته نيانت (۴) مسمى مانيردن سرست اولمسی  
 سيميله رعایا حنده خلاف تنظيمات حربه سرگونه نعدی و اطوار ناشاسنده  
 وحباً من الوجوه نعدی ايلميه و ايدرايه سرموحت فابوعمانه حرا ناديساب با  
 لازمه سی احرا قلنه و نچار مرفومه دن فوت اولنلرك دكان و اوطه و مانرا ملاكلرك  
 جانب شرعدن شفه و نظارت مشارالیه طرفندن شفه صهبر اولمعيوب املاك مفروك  
 و املاك و غفار و سائر حروی و كللی اشیا و نفودلرینه درته لری موحد اولدغه  
 جانب ميريدن تعرض و صهبر و صط اولميه و صعير و صعيره لرك بولموب شرعاً  
 تحریرى لازم گئليردن ريناده رسم طلبيله تصديق بيدر لمعيوب سرفقتضای شرعتريف  
 سير الورنه نظارت مشارالیه معرفتيله تفسيم ايئريله و صعير و صعيره و عانت  
 و عانته سی اولمعيوب سير الورنه تفصیلى مراد اولمعيان تركه نخی سر درلو (۱)  
 حسر و اسرام ايله تحریر ايندر لميه و اعلى حربه اون ايكنى عروش ايكنى صعباً  
 للميرى مكر عروش صعبه اصحاب سروات سندی ويره حككه بگر ميشر عروش حربه بی  
 ايكيورا ونورا ايكنى و فرو و فرو اوج نار يخلرى صعيه سندن شفه اللی سده سی  
 محرمندن اعتناراً عموماً واقع اولان صم حدبدايله معاً و نوحراً اراده سسيه  
 شاهانه مله تأسیر اولمان اصوله نظيفاً بهر سده عره محرمده محلته تسليم  
 ايليه لير و اوا مر عليه مله خدمتكار اولنلر نخی شروط نظاملری مقتصاسحه  
 درت عروش صعباً ويره گلدكلرى اوسط حربه بی كدلك اونورا ايكنى و فرو و فرو  
 اوج سده لری صعيه سندن ماندا بيگی اولان صم ايله براسر بهر سده وقت و  
 زمانده نأديه ايده لير و اشو امتيازات احق تجار مرفومه و ايكبشر ندر  
 خدمتكارلرينك كندو حقلرینه محصور اولموب اولان و متعلقانلر ويره نده امر  
 باليشانم اولمعيان خدمتكارلری حقلرنده سائر رعایای دولت عليه نصل  
 معامله اولنمنده ايه اولوجهله اجرا اولنه و يدلرینه بروات و اوا مر عريفم



خدمتکاری شروط سرائی موصیحه حمایت و صیانت اولعمو ناسند. مقدماً ما در اولان امر عالی تحدید اولعمق اورره بحار و نظارتی طرفنددر سولتم اولعمتر و دیوان حمایتونده محظوظ نشان خدمت مراعص اولندقدن تاخر مرفوم اورویا د عجم و هندستان بحاریدر اولعمق اورره اشهره ما سرک اولاند حمادی الآخره سندن خدمت جدیداً سرات عالیباشم ویرلعم اولدیمعی مظور و مقصد سولتمق اولعمقله خدمتکار مرفومک د حی بدنده اولان عقیقو امر عالی احد و بطالب حفظ ایله جدیداً اشهره امر شریفم اعطا اولعمنددر امدی تاخر مرفومک ایکی نفر خدمتکار لرمندن مرفوم فالوس ولد قول سمک کما کار کند سمک خدمتده اولمور شروط نظاملرک موصیحه اولمظ اعصار یله فرما یلو خدمتکار لرک ویره گلدکلری جریه بی اللی سم سی مخرمندن اعتباراً عمومی واقع اولان صه جدیدایک سعاً و موخرراً آنسر فلنار اصوله تنظیماً شهر سم وقت و زمانده مرفوم بحی محلّت تسلیم ایلدکه مکرر مریه طلسمی د حائر و حکم معدن و رحیده اندر لمیور سر موجب شروط حمایت و صیانت اولعمق لارمندن ایله دکی سرک نائب مومی السیه مسن معلومک اولندقدن سر وجه مشروح عمل و حرکت و معایر شروط نظام حالات موعندن محاسبه ایلیه سر شوپله نیکه سر علامه شریفه اعمداد قیله سن .  
تحریراً فی اوائل شهر حمادی الآخره سنه ثلث سنه و ماہتین و الف  
محرره قسطنطین

А. Д. ПАПАЗЯН

ЛИЦЕНЗИИ, ПОЛУЧЕННЫЕ В 1847 Г. ОТ СУЛТАНА АБД-УЛЬ-МЕДЖИДА СЫНОВЬЯМИ ГЮЛЬБЕНКА ГУЛАБИЕМ И ГАЛУСТОМ

(Резюме)

Публикуемые здесь две лицензии—грамоты, полученные в 1847 г. жившими в Кесарии предками известного торгового дома Гюльбенкян от султана Абд-уль-Меджида, содержат заслуживающие внимания сведения о правовом положении и месте, которое занимало армянское купечество во внешней торговле Османской империи. Их заверенные копии хранятся в центре того же фонда, находящегося в Лиссабоне.

Дешифровка турецких оригиналов грамот осуществлена на основании любезно предоставленных директором фонда Р. Гюльбенкяном не очень удачных фотоснимков. Наряду с оригиналом вниманию специалистов предоставляется полный научный армянский перевод, сохраняющий формулировки и стиль, присущие османской дипломатике.

В кратком введении сделана попытка очертить источниковедческое

значение публикуемых документов, составленных по примеру экстерриториальных прав, даваемых европейским купцам.

Документы дают возможность изучить многие вопросы, связанные с деятельностью христианских купцов в Османской империи: привилегии, предоставляемые купцам-христианам, являющимися подданными империи (зимми), взыскиваемые с ввозимых и вывозимых товаров таксы пошлин и порядок оплаты, формы уплаты взыскиваемого с зимми подушного налога (джизья), порядок рассмотрения торговых споров, цеховую организацию, управление купеческого сословия и др.

H. D. PAPAZIAN

LICENCES REÇUES EN 1847 DU SULTAN ABD-EL-MEDJID  
PAR GULABI ET GALOUSTE, FILS DE GULBENK

(Résumé)

Les deux licences publiées, reçues en 1847 par les ancêtres résidant à Césarée de la célèbre maison de commerce Gulbenkian du sultan Abd el-Medjid, contiennent des données dignes d'attention sur la situation juridique et la place qu'occupaient les marchands arméniens dans le commerce extérieur de l'Empire Ottoman. Leurs copies certifiées sont conservées au Centre du Fonds Gulbenkian à Lisbonne.

Le déchiffrement des originaux turcs de ces licences a été effectué sur des photographies, d'ailleurs peu réussies, aimablement mises à notre disposition par le directeur du Fonds R. Gulbenkian. Outre l'original, les spécialistes pourront prendre connaissance de l'entière traduction arménienne scientifique qui conserve les formules et le style propres à la diplomatie ottomane.

La courte préface est un essai de mise en valeur de l'importance, du point de vue de l'étude des sources, des documents publiés, rédigés sur l'exemple des droits ex-territoriaux accordés aux commerçants européens.

Les documents donnent la possibilité d'étudier de nombreuses questions relatives au statut des marchands chrétiens dans l'Empire Ottoman: privilèges donnés aux commerçants chrétiens citoyens de l'Empire (zimmi), taxes des droits de douane perçus lors de l'importation et l'exportation des marchandises et leur paiement, formes de perception de l'impôt d'âme (djizzia) payé par les zimmi, examens des différents commerciaux, organisation syndicale ("esnaf"), administration des commerçants, etc.